

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

# ԱՂՐՔԵԶԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ 1920Թ.՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆՈՒՄԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ

## ԱՆԻ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ,  
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս  
[anixach-94@mail.ru](mailto:anixach-94@mail.ru)  
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Էդգար Հովհաննիսյան

Հայ-աղբբեջանական տարածքային հակամարտությունը՝ կապված Արցախի հետ, ներկայումս լարված բնույթ ունի և կարոտ է հանգուցալուծման: Մեր կողմից խնդիր է դրվել ներկայացնել և լուսաբանել Արցախյան հիմնահարցի պատմությունը 1920թ.:

Արցախի տարածքային հիմնախնդիրը առաջացել է ցարական ինքնակալության ժամանակներից: Ցարիզմը Անդրկովկասի վարչական բաժանումները կատարել էր կամայականորեն՝ հաշվի չառնելով պատմական սկզբունքները: 1918թ. նորանկախ Հայաստանի և Աղբբեջանի միջև սրվում են հակասությունները կապված տարածքային խնդիրների հետ, որոնք էլ ավելի լարված բնույթ են ստացան 1920թ.: Աղբբեջանը գիտակցելով Արցախին, Նախիջևանին և Չանգեզուրին տիրելու կարևորությունը, որոշում է դիմել կտրուկ քայլերի տարածքային հարցերն ի օգուտ իր երկրի լուծելու համար<sup>1</sup>: 1920 թ. հունվարին աղբբեջանական զորքերը շարժվում են Չանգեզուրի դեմ և նվաճում այն<sup>2</sup>: 1920 թ. հունվարի 19-ից զանգեզուրցիները Դրոյի գլխավորությամբ բուռն գրոհով ազատագրում են բուն Չանգեզուրի և Կապանի միջև ընկած տարածությունը<sup>3</sup>: Աղբբեջանցիները իրենց պարտության գլխավոր մեղավոր էին համարում Արցախը և որոշում են վերջնականապես նվաճել այն ու ապահովել իրենց թիկունքը<sup>4</sup>:

Նոր իրադրության պայմաններում, Ազգային խորհուրդը որոշում է իրավիճակը համագումար և վճռել Արցախի հարցը: Թվով 8-րդ համագումարը բացվում է 1920 թ. փետրվարի 28-ին Վարանդայի Շոշ գյուղում և տևում է մինչև մարտի 4-ը: Արցախի համահայկական համագումարի ներկայացուցիչները իրենց կամքից անկախ, հավաքվում են երկու տարբեր վայրերում՝ Շոշում և Շուշիում: Շոշի համագումարը խստորեն դատապարտում է Արցախի դեմ մուսավաթական Աղբբեջանի ոտնձգությունները, իսկ զուգահեռ ընթացող Շուշիի համագումարում Սուլթանովի հսկո-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս I), թ. 3:

<sup>2</sup> **Ղարիբյան Ա.**, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012, էջ 145:

<sup>3</sup> **Ղրո.** Կենսագրական հուշեր, վկայություններ, Երևան, 1991, էջ 142:

<sup>4</sup> **Սիմոնյան Ա.**, Չանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, 2000 թ., էջ 42:

ղութամբ ընդունվում են Ադրբեջանի շահերին ծառայող որոշումներ, այդ թվում Արցախը համարվում է Ադրբեջանի տնտեսական մասը<sup>1</sup>:

1920թ. գարնան Նախաշեմին Ադրբեջանը ձեռնամուխ է լինում ուժային ճանապարհով Արցախի հարցի լուծմանը և այդ նպատակով շուրջ 10 հազար զինվոր և քրդական մի դիվիզիա կենտրոնացնում Ղարաբաղի (այժմ՝ Արցախ) գավառում: Շուշի է ժամանում Նուրի փաշան 10 թուրք սպաների ուղեկցությամբ<sup>2</sup>: Մուսավաթականները նախ ամրացնում են Շուշին և Խանքենդի (այժմ՝ Ստեփանակերտ) ավանը, այնուհետև գրավում Ասկերանի անցուղին և դրանով ապահովում Ադրբեջանի կապը Շուշիի հետ<sup>3</sup>: Արցախահայության ինքնապաշտպանության կազմակերպման համար 1920թ. հունվարին Երևանից Արցախ են թափանցում զինվորականներ՝ արևմտահայերի հեծյալ զինվորների մի փոքր ջոկատի ուղեկցությամբ և Վարանդայի Սարուշեն գյուղում հիմնում զինվորական շտաբ Արսեն Միքայելյանի ղեկավարությամբ: Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ Արցախում կենտրոնացած թուրք-թաթարական մեծաթիվ զորքերը սկսում են բռնությամբ զինաթափել բնակչությանը<sup>4</sup>: Հայկական փոքրաթիվ ուժերը հերոսական դիմադրություն են ցուցաբերում և պաշտպանում են իրենց հայրենիքը: Մարտի 23-ի առավոտյան սկսվում է Ասկերանի հերոսամարտը՝ Դալի Ղազարի հրամանատարությամբ: Զաջարի մարտիկները գրավում են Ասկերանի բերդը, որը երկու կողմերի համար ուներ ռազմական նշանակություն: Ասկերանի դեմ թշնամին նետել էր 30 հազարից ոչ պակաս կանոնավոր ու անկանոն ուժեր, մինչդեռ նրանց դեմ կանգնած էր 450-500 զինվորից կազմված հայկական ջոկատ՝ զինված միայն հրացաններով, այն էլ փամփուշտների խիստ սակավ պաշարներով: Ապրիլի 3-ին նրանց է միանում նաև հայկական զորամասի պետ Ա. Թարվերդյանը՝ 100 հեծյալ զինվորների ուղեկցությամբ<sup>5</sup>: Ադրբեջանական զորքերը մարտի 30-31-ին 10 թնդանոթներով հարձակում են սկսում 3 ուղղություններով՝ Ասկերան- Շուշի խճուղի, Ակնա- Վանք և Կարաչինար-Երբջե (այժմ՝ Գյուլիստան)<sup>6</sup>: Ապրիլի 3-ին թշնամին ամբողջ ուժով նետվում է գրոհի: Հայ մարտիկները բարիկաղներում և խրամատներում սխրանքներ էին գործում, սակայն չունեին բավարար քանակությամբ զենք ու զինամթերք: Դալի Ղազարը անհուսալի համարելով քաղաքի հետագա պաշտպանությունը, հրամայում է Ասկերանը պաշտպանող զինվորներին թողնել բերդը և խճուղին, իսկ ինքը պայթարում է մինչև վերջին շունչը: Ապրիլի 4-ին և 5-ին տիրում է դադար<sup>7</sup>: Մինչև ապրիլի 12-ը

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց 1, գ. 563, էջ 48-50, **Հարությունյան Յ.**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, էջ 206-208:

<sup>2</sup> **Нагорный Карабах в 1918-1923 гг.**, Сборник документов и материалов, Ереван, 1992, стр. 431:

<sup>3</sup> **Աբրահամյան Յ.**, Արցախի գոյամարտ, Երևան, 1991, էջ 34:

<sup>4</sup> **Нагорный Карабах в 1918-1923 гг.**, стр. 431:

<sup>5</sup> **Հարությունյան Յ.**, նշվ. աշխ., էջ 213-215:

<sup>6</sup> **Սիմոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 43:

<sup>7</sup> **Հարությունյան Յ.**, նշվ. աշխ., էջ 215-216:

մուսավաթական բանակին հաջողվում է գրավել մի շարք հայկական գյուղեր<sup>1</sup>:

Մինչ Ադրբեջանը փորձում էր զենքով հանջողության հասնել՝ հայ-ադրբեջանական վիճելի տարածքների հարցը քննարկելու նպատակով 1920թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում հրավիրվում է Անդրկովկասյան երեք հանրապետությունների կոնֆերանս: Կոնֆերանսում Հայաստանը ներկայացնում էին Յ. Օհանջանյանը, Ա. Բեկզադյանը, Ա. Խատիսյանը, իսկ Ադրբեջանի կողմից ներկա էին Բ. Ադաևը, Վ. Կրիչինսկին, Բ. Վեքիլովը: Կոնֆերանսն ավարտվում է ապրիլի 12-ին առանց որևէ էական արդյունքի:

Փաստորեն՝ Հայաստանի կառավարությունը տվյալ շրջանում սպառում է Արցախի հարցի խաղաղ կարգավորման բոլոր հնարավորությունները, ուստի և վճռում է գինված օգնության հասնել տեղի արյունաքամ եղած ժողովրդին<sup>2</sup>: Հայոց կառավարության կարգադրությամբ 1920թ. ապրիլի 14-ին Չանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառ են մտնում Դրոյի զորամասերը և հաստատվում Սարուշեն գյուղում: 3-4 օրվա ընթացքում նրանց հաջողվում է Արցախի հողը ազատագրել թշնամուց, որից հետո Դրոյին սպասում էին լարված օրեր: Բնականոն անհրաժեշտություն էր դարձել Արցախը ՀՀ անբաժան մաս հռչակելը և համահայկական կառավարության ենթակայության ներքո Արցախի տեղական մարմինների ստեղծումը: Ուստի կազմվում է Արցախի ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ են մտնում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, նշանակվում են կոմիսարներ: Արցախի ժամանակավոր կառավարության ստեղծումով՝ նրա ժողովրդի պայքարը ստանում է ավելի լուրջ ու կազմակերպված բնույթ, ստեղծվում է բանակի ընդհանուր հրամանատարություն՝ Դրոյի գլխավորությամբ: Ադրբեջանին սահմանակից հայկական գյուղերում տեղակայվում են զորագնդեր: Բոլոր ճակատներն ու ռազմավարական նշանակության բնակավայրերը միացվում են հեռախոսային գծերով<sup>3</sup>:

Ապրիլի վերջին Թաղավարդ գյուղում ժամանակավոր կառավարությունը 2 նիստ է գումարում: Այդ ժամանակ Արցախի ժամանակավոր կառավարության ներկայացուցիչները միաձայն որոշում են կայացնում ընդունել ՀՀ կողմնորոշումը, Արցախը ենթարկել Չանգեզուրի նահանգապետությանը՝ այնպես, որ Արցախն ու Չանգեզուրը միասին կազմեն Հայաստանի Հանրապետության մի մասը<sup>4</sup>: Մինչ ժամանակավոր կառավարությունը նիստեր էր հրավիրում, Ադրբեջանում ապրիլի 28-ին<sup>5</sup> հաստատվում են խորհրդային կարգեր, որից հետո մայիսի 11-ին Շուշիի ու Չանգեզուրի շրջաններում հայ-մուսավաթական կոտորածները կանխելու պատրվակով, Կովկասյան ճակատի հրամանատարության հրամանով,

<sup>1</sup> «Հառաջ», 12 սեպտեմբերի, 1920թ.:

<sup>2</sup> Հարությունյան Յ., նշվ. աշխ., էջ 227-228:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 230-232:

<sup>4</sup> Աբրահամյան Յ., նշվ. աշխ., էջ 39-40:

<sup>5</sup> Հարությունյան Յ., էջ 240-249:

11-րդ կարմիր բանակի ձախթեյան գործառնաբերը շարժվում են Նախիջևան-Օրդուբադ-Շուշի ուղղությամբ<sup>1</sup>: Չնայած Արցախի ժամանակավոր կառավարությունը Դրոյի գլխավորությամբ ընդդիմանում էր և չէր ցանկանում ընդունել խորհրդային կարգեր, այնուամենայնիվ պատմական իրադատությունները դասավորվում են այլ կերպ: 1920թ. մայիսի 22-ին տեղի է ունենում Արցախի ժամանակավոր կառավարության վերջին նիստը, որտեղ Արշավիր Զամալյանը հայտարարում է, որ ստեղծված իրավիճակում դրությունը կարող են փոխել բուլշևիկները՝ իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը և Արցախը հայտարարելով խորհրդային Ռուսաստանի մի մասը, այլ ոչ թե Ադրբեջանի<sup>2</sup>: Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնում է բժիշկ Սաքո Յամբարձումյանին, որից հետո մայիսի 28-ին Թաղավարդ գյուղում տեղի է ունենում արցախահայության 10-րդ համագումարը, որտեղ Լեռնային Ղարաբաղը հռչակվում է խորհրդային, որից հետո ստեղծվում է հեղկոմ Սաքո Յամբարձումյանի Նախագահությամբ<sup>3</sup>: **Արցախի խորհրդայնացումը նոր իրողություններ է առաջ բերում և փոխում հարցի լուծման ընթացքը:**

1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում խորհրդային Ռուսաստանի և ՀՀ միջև կնքվում է համաձայնագիր, որը բաղկացած էր 6 կետից: Ըստ համաձայնագրի ռազմական գործողությունները ՌՍՖՍՀ-ի և ՀՀ զորքերի միջև օգոստոսի 10-ին, ժամը 12-ից համարվում են դադարեցված: ՀՀ զորքերը գրավում են հետևյալ գիծը. Շահթախտ-Խոկ-Ազնվաբերդ-Սուլթանբեկ, այնուհետև Կուկից հյուսիս և Բազարչայից (այժմ՝ Գորայք) արևմուտք ընկած սահմանը: ՌՍՖՍՀ-ի զորքերը գրավում են վիճելի համարվող Արցախի, Չանգեզուրի և Նախիջևանի մարզերը: Մինչև ՌՍՖՍՀ և ՀՀ միջև պայմանագրի կնքումը երկաթգծի Շահթախտ-Ձուղա հատվածի շահագործման իրավունքը տրվում է Հայաստանի երկաթուղային ճանապարհների վարչությանը, սակայն, պայմանով, որ այն չի կարող ռազմական նպատակներով օգտագործվել<sup>4</sup>: **Այս համաձայնագիրը, որն իրականում պարտադրվեց Հայաստանի կառավարությանը միայն վավերացրեց կատարված փաստը:**

Արցախին վերջնականապես տիրելու համար Ադրբեջանի ղեկավար գործիչները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում՝ խարդախություն, կաշառակերություն, բռնություն, ահաբեկում, սադրանքներ և այլն:

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո Արցախի տարածքային հիմնահարցը մտնում է նոր շրջափուլ: Նոյեմբերի 30-ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում Ադրբեջանի հեղկոմի Նախագահ Նարիմանովը հանձնարարում է հեղկոմի անունից հռչակագիր ուղարկել Հայաստանի հեղկոմին, ըստ որի Արցախը, Չանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի սոցիալիստական հանրապետու-

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., էջ 464-465:

<sup>2</sup> Արրահամյան Զ., նշվ. աշխ., էջ 44:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 33:

<sup>4</sup> Չոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 126-127:

թյան մասերը: Սակայն հռչակագրի հրապարակումից շատ չանցած՝ Ադրբեջանի կառավարությունը, ամենից առաջ նրա ղեկավար Նարինա-Նովը, համագործակցելով հայ ժողովրդի ռիսերիմ թշնամի քեմալականների հետ, անում են ամեն բան պատերազմից արյունաքամ եղած Հայաստանին բզկտելու, նրանից ավելի մեծ տարածքներ բռնազավթելու համար<sup>1</sup>: Այս ամենի վառ վկայությունն էլ 1921թ. հունիսի 5-ի հանրահայտ որոշումն էր՝ համաձայն որի պատմական Հայաստանի մաս համարվող Արցախը բռնակցվում էր Ադրբեջանին՝ անտեսելով ազգերի ինքնորոշման իրավունքը և առաջին պլան մղելով տնտեսական գործոնը:

Այսպիսով՝ 1920թ. Հայաստանը դարձել էր քեմալա-բուլշևիկյան դաշինքի և նրանց միջնորդ-օղակ Ադրբեջանի ռազմադիվանագիտական խարդավանքների գոհը:

Սակայն ի փառս 1988-1994թթ. Ղարաբաղյան շարժման՝ Արցախն անկախանում է Ադրբեջանից և 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

### ***Անի Խաչատրյան***

#### **ԱՂՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ 1920 Թ.՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ**

**Բանալի բառեր՝ Արցախյան հիմնահարց, հայ-ադրբեջանական  
հակամարտություն, Արցախի խորհրդայնացում,  
Շոշի համազումար, Ասկերանի հերոսամարտ**

Մեր կողմից ներկայացվող թեմայի հիմնական խնդիրն է լուսաբանել Արցախյան հիմնահարցը 1920թ. և այն ներկայացնել պատմական ճշմարտության տեսանկյունից: Թեման արդիական է նաև այսօր, քանի որ դեռևս ավարտված չէ հայ-ադրբեջանական հակամարտությունը և մենք այժմ գտնվում ենք հիմնախնդրի կարգավորման կարևորագույն փուլում: Ուսումնասիրելով հրապարակի վրա եղած գրականությունը և արխիվային փաստաթղթերը՝ մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ Արցախը՝ Ադրբեջանի մաս ճանաչելու Խորհրդային Ռուսաստանի որոշումը պայմանավորված էր 1920թ. Հայաստանի վարած թույլ դիվանագիտությամբ և քեմալա-բուլշևիկյան մերձեցմամբ:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 268- 276:

*Ани Хачатрян*

## **ТЕРРИТОРИАЛЬНЫЕ ПРЕТЕНЗИИ АЗЕРБАЙДЖАНА К АРМЕНИИ В 1920 ГОДУ: ОТ ИСТОКОВ АРЦАХСКОГО КОНФЛИКТА**

**Ключевые слова:** *Арцахский вопрос, Армяно-азербайджанский конфликт, советизация Арцаха, конференция Шоша, битва Аскерана*

Основная проблема нашего исследования является выяснение и представление Арцахского вопроса в 1920 году с точки зрения исторической правды. Тема является очень своевременным, потому что конфликт между Арменией и Азербайджаном еще не закончена, и мы находимся в важном этапе урегулирования конфликта. Во время изучения печатных материалов и архивных документов, мы пришли к выводу, что решение Советской России, в соответствии с которым Арцах был известен как территория Азербайджана, было принято из-за слабой дипломатии Армении и кемалистского-большевистского альянса.

*Ani Khachatryan*

## **AZERBAIJAN'S TERRITORIAL CLAIMS TOWARDS ARMENIA IN 1920: FROM THE ORIGINS OF ARTSAKH CONFLICT**

**Key words:** *Artsakh issue, Armenian–Azerbaijani conflict, the sovietization of Artsakh, Shosh conference, the battle of Askeran*

The main problem of our research is to elucidate and to present Artsakh issue in 1920 from viewpoint of historical truth. The topic is very timely, because the conflict between Armenia and Azerbaijan isn't over yet and we are in an important stage of conflict regulation. Studying whole printed materials and archive documents we may conclude that the decision of Soviet Russia, according to which Artsakh was known as territory of Azerbaijan, was made because of weak diplomacy of Armenia and Kemalist-Bolshevik alliance.